զհովուապետն Ներսէս, մինչեւ ի գալուստն նորա. մինչեւ կատարեաց Տէր զաշխարհի խնդրուածս, եւ դարձաւ սուրբն Ներսէս ի տեղի իւր:

8 Զայնու ժամանակաւ Արշակ արքայ Հայոց ոչ ինչ կարի ի ճանապարհ Աստուծոյ գնացեալ լինէր. զի որչափ ի մատաղութեանն հասակին ըստ աստուածային իմաստութեանն գնացեալ լինէր, նոյնչափ յաւագութեանն ի լկնութեան[1] ի շաղաշատութեան հատաւ[2]. զոր սուրբ հովիւն Խադ բազում անգամ յանդիմանեալ կշտամբէր, որում ոչ ինչ անսացեալ լինէր: *9* Զայնու ժամանակաւ շինեաց իւր արքայն դաստակերտ մի ի հովիտն անուանեալ ի Կոգ գաւառի: *10* Եւ ետ հրաման ընդ ամենայն գաւառս իշխանութեան իւրոյ, եւ հրամայեաց կարգել քարոզ ընդ ամենայն տեղիս աշխարհացն հրապարակին իւրոյ. եւ ամենայն կողմանս գաւառաց իւրոց լի առնէր հրամանաւն արքունի, զի եթէ ոք ումեք ինչ պարտիցի, եթէ ոք ուրուք ուստեք ինչ վնասեալ իցէ, կամ ոք ումեք ինչ դատ պարտիցի, ամենեքեան եկեսցեն ի դաստակերտն շինեսցեն: *11* Եթէ արիւնահան ոք իցէ, կամ վնաս ուրուք արարեալ իցէ, կամ զկին ուրուք տարեալ իցէ, կամ պարտապան իցէ, կամ ոք զուրուք կարասի ունիցի, կամ ոք յումեքէ երկիւղած ինչ իցէ, եւ եկեսցէ յայն տեղի, դատ եւ իրաւունք մի՛ լիցին: *12* Իսկ եթէ ոք ումեք ինչ պարտիցի, եւ որում պարտիցին՝ եկեալ յայն տեղին, առանց դատի եւ իրաւանց կալցին եւ ի դուրս տարցեն:

13 Իբրեւ ել հրաման յարքայէն, ժողովեցան այնուհետեւ յայն տեղի ամենայն գողք եւ աւազակք, արիւնահանք, սպանողք, սուտք եւ մարդելոյզք վնասակարք, գանձահատք, զրկողք, ստադատք, զրախաւսք, գերփողք, յափշտակողք, ժլատք: *14* Բազում վնասս վնասս առնէին, եւ անդր անկանէին. բազում կանայք զարս թողուին, եւ անդր անկանէին. բազում արք զիւրեանց կանայս թողուին, եւ զայլոյ կանայս առեալ՝ անդր անկանէին. բազում ծառայք զիւրեանց տերանց զգանձս ըմբռնեալ, փախուցեալք անդր անկանէին. բազում աւանդառուք զաւանդս լի զպահեստս բարձեալ, անդ անկանէին. գերփէին աւերէին զերկիրն ամենայն: *15* Զի թէպէտ եւ կարի յոյժ բազմացաւ աղաղակն, դատ չկայր, եւ իրաւունք ումեք յարքունուստ ոչ ելանէին: *16* Վասն այսորիկ ամենայն մարդ հառաչելով վայէին, եւ ասէին ի հաւանել բանիցն իւրեանց. այս բանք ըստ այսմ աւրինակի պաշտէին, առ հասարակ ամենեցուն ասելով՝ թէ իրաւունք մեռան, եւ վասն այսորիկ ոչ գտանէին. այլ թէ էր, եւ կորուսեալ էին, ուր եւ էր ջանայաք խնդրէաք գտանէաք:

17 Իսկ տեղին աւանանայր, քաղաքանայր. մեծացաւ բազմացաւ եւ ելից զհովիտն ամենայն: *18* Ապա տայր հրաման արքայն Արշակ դնել անուն դաս-

---

1 *Յօր.* լկութեան

2 *Յամենայն օրինակս՝* հաւատ